

Դողվճն¹ են. տային գիտել եւ զայն եւս սթափութեամբ հասանել² ի միջոյ կողման³ աշխարհիս: 12 Չոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց եւ որ ընդ նմայն էին՝ եւս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղ-վաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան. քանզի անձանձրոյթ աղաւթէին հանապազ⁴ ի տուէ եւ ի գիշերի, լինել արժանի⁵ այնպիսի մասին երկնաւորի. եւ երկրորդ՝ ասէին, թերեւս անդէն ի տեղւոջն ի Հեր եւ ի Չարեւանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին, եւ ոչ ոք լինէր⁶ արգել զաւրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ եւ գերելով յարձակել եւ վնասել: 13 Եւ սոցա թեպետ եւ ածեալ զայսպիսի ինչ զմտաւ կամէին փութալ՝ սակայն եւս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտագ, հուպ ի գեաւղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ⁷ տեղի Տղմուտ դաշտին, զոր ընտրեաց յաղագս երկիւղի զաւրացն Հայոց. ամուր⁸ ապաստանի անձանց համարէին պատշաճ, եւ ի միջի նորա ածեալ դակիշ բանակէին:

ԼԸ. Իսկ ի յաւուր ուրբաթու մեծի տաւնին պենդէկոստէին դիմեալ հասանէին մերձ ի նոյն տեղիս զաւրքն Հայոց, գտեալ անպատրաստագոյն զզաւրսն Պարսից. որոց թէ կամեցեալ էին՝ կարող էին մասնաւորապէս⁹ վնասել երամակարծակ ծուլացելոցն. բայց թոյլ տուեալ դադարեցին յայնմ աւուր. քանզի ոչ էր եղեալ ի մտի նահատակութեան փափաքողաց՝ այնուհետեւ յաղթել, վասն տեսանելոյ հանապազաւր զհոգեկորուսացն զապակա-նումն¹⁰, այլ միշտ եւ հանապազ ի կետ կոչման եւ տենչալի մարտիրոսութեանն փութանային հասանել:

2 Եւ ժողովեալք այնուհետեւ մաւտ առ զաւրսն Պարսից բանակէին¹¹, մինչ եղեալ սահմանն ընթացից տուընջեանն կատարեր: 3 Եւ հասեալք ի ժամ երեկոյին եւ զկանոն պաշտաման ժամու աղաւթիցն ըստ սովորութեանն լցեալ՝ զուարճանային չափաւոր ուրախութեամբ կերակրովքն: 4 Եւ կատարեալ զամենայն՝ առնուին հրաման ի սուրբ քահանայիցն՝ արթուն խնդրուածովք կատարել զգիշերն յաղաւթս: 5 Եւ զցայգն ամենայն դասք

1 Ձ. դողվճն

2 ԲԳտ. ծանօթութեան մէջ լրացնում են այսպէս՝ «եթէ կամին սթափութեամբ հասանել»

3 Թուի ի միջոյ կողմն կամ՝ ի միջակողմն

4 Ձ. չիք հանապազ

5 Ձ. չիք արժանի

6 Թերեւս՝ եւ որով լինէր

7 Ձ. աւար այրի շրջափակ

8 Ատ. ապուր, որ ԲԳտ. ուղղագրել են ամուր

9 Ձ. մասնաւորութեամբ

10 Ձ. զապտակումն

11 Ատ. բանակին